

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ ճարտասանական մտքի պատմության մեջ Թումանյանը դեռևս իր արժանի գնահատականը չի ստացել, և բանաստեղծի խոսքի մշակույթի առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրության բացակայությունը թումանյանագիտության սպիտակ էջերից է: Գրողի խոսքի առանձնահատկություններն արտահայտվել են ինչպես նրա գեղարվեստական, այնպես էլ հրապարակախոսական ժառանգության մեջ, մասնավորապես բանավիճային հոդվածներում: Դրանք վերաբերում են թե՛ գեղարվեստի ու մշակույթի խնդիրներին և թե՛ հասարակական գանազան երևույթների: Յուրաքանչյուր ազնիվ բանավեճում նա ընտրում էր ոչ թե սպանելու և ոչնչացնելու, այլ ուժ տալու ու կենդանացնելու ճանապարհը. 1910 թ. «Չար վերաբերմունք» հոդվածում Թումանյանը գրում է. «Մենք ... միայն մի բան կկամենայինք, որ փոխվեին մեր բարքերը վերջապես, որ վերանար այդ ավերիչ վերաբերմունքը, այդ գարշելի, բարբարոսական ադաթը մեր մամուլի միջից, տեղի տալով անաչառ, վայելուչ քննադատության, լայն ու պայծառ հայացքին... և, փոխանակ սպանելու, քանդելու, ջրատելու, աշխատենք ուժ տալ ու կենդանացնել»¹:

Թումանյանի բանավիճային ելույթներն աչքի են ընկնում սեփական իրավացիության այնպիսի հավատով, որ հատուկ է միայն մեծ մտածողներին: Անգամ այն հոդվածները, որոնց գրելու շարժառիթները եղել են անձնական վիրավորանքները և հանիրավի հարձակումները, բնորոշվում են խոր ընդհանրացումներով ու արժարժում են հասարակական հնչեղության հարցադրումներ: Յուրաքանչյուր առիթով նա ապացուցում էր, որ իր վեճը անձնական չէ: Գրողի հոդվածները ծայրաստիճան հագեցած են կենսական, գրական և նույնիսկ գիտական փաստարկներով, նյութի հարստությամբ ու համապարփակ ընդգրկմամբ, վիճակագրական տվյալներով, ընդհանրացնող բնույթի դիտողություններով, կենդանի երկխոսությունների եղանակով առարկայական, երբեմն գեղարվեստական պատկերի տեսք ստացած հարցադրումներով ու գնահատականներով: Նա տիրապետում էր փաստարկների պերճախոս լեզվով ընթերցողին համոզելու, իր ասելիքը ապացուցելու արվեստին: Նրա հակառակորդները ստոյվ ու կեղծիքով, կուսակցական միտումնավորությամբ, ոչ այնքան այլակարծությամբ, որքան չարությամբ ու նախանձով հերքում էին ականհայտ իրողությունները: Նրանցից շատերը, ինչպես գրում է Պ. Սևակը, ջանում էին

¹ Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 6, Երևան, 1994, էջ 253 (այսուհետև սույն հրատարակությունից արվող մեջբերումների հատորն ու էջը կնշվեն տեքստում):

«Հորի ետամնացության և գեշ պահպանողականության որջ դարձնել Թումանյանի դասական ապարանքը... Սրանց երևի խանգարում էր Թումանյանի դասականությունը»²:

Հեղինակային իրավունքի պաշտպանությունը XX դարի առաջին տասնամյակների ամենացավոտ խնդիրներից էր: Թումանյանը թե՛ իբրև գրող, թե՛ իբրև հրապարակախոս բազմիցս է անդրադարձել այդ հարցին: Առաջին անգամ այդ մասին նա արտահայտվել է դեռևս 1897 թ., երբ ոտնահարվել էին Շիրվանզադեի հեղինակային իրավունքները: Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության պատվերով վերջինս թարգմանել էր երկու գրքույկ: Ընկերությունը թարգմանչից անկախ պատճառներով դրանցից մեկը չի հրատարակում և արդեն վճարված հոնորարը 1897 թ. մարտի 22-ին կայացած ընդհանուր ժողովում որոշում է «համարել գրողի պարտքը ընկերությանը» ու պահանջում է վերադարձնել գումարը: Ժողովին ներկա էր նաև բանաստեղծը: Հրատարակչական ընկերության ապօրինի պահանջը, գրողին անհատույց աշխատեցնելը Թումանյանը հրապարակայնորեն անվանում է «խուժանական լոգիկայի» արտահայտություն (6, 84): Հակառակ կողմի պատասխանը չի ուշանում: Ինչպես հաճախ, այս անգամ էլ գրողի հակառակորդները չեն համարձակվում բաց ճակատով դուրս գալ նրա դեմ: «Մշակի» աշխատակիցը՝ «Գրող» ծածկանվամբ, հերյուրախառն խոսքերով պարսավում է բանաստեղծին: Նա գրում է. «Մի երիտասարդ՝ Հովհ. Թումանյանց, բայց թողնենք նրան, – «գի ոչ գիտե՞ գինչ գործե՞», նա ինքն իրեն թաղեց հենց իր հողվածով, որի մեջ, նա, խուժանի այդ հարագատ զավակը, արիստոկրատական ծիրանի հագած, արշավանք է սկսում խուժանի դեմ»³: Բանաստեղծն իր «թաղման վճիռը» որակում է «անգոր և միամիտ մասխարություն», միաժամանակ «խելքից ու բարոյականությունից զուրկ ձգտում», որը զագրելի է և բարոյական անկման «ահռելի նշան» (6, 85): Եթե «Մշակի» «Գրողը» խուժան բառը խառնամբոյս իմաստով էր գործածել և Թումանյանին անվանել էր խաժամուժի զավակ, ապա բանաստեղծն «Ընդդիմախոսություն» հողվածում իրեն հասցեագրված խուժան բառի տակ հասկանում է և՛ ժողովրդուրդ, և՛ ամբոյս: Նա գրում է. «Այո՛, պ. խավարամիտ... իմացած եղեք... որ տեղը եկած ժամանակ ես հանգիստ խղճով և մաքուր ոգևորությամբ արշավանք կսկսեմ և՛ այն խուժանի դեմ, որի հարագատ զավակն եմ ես և՛ որին սիրում եմ: Ես չեմ ծառայում և չեմ էլ ծառայելու խուժանի հաճույքին ու ձայնին, այլ այն գաղափարներին, որ բարձրացնելու են նրան: Այս թող լինի... մի երդում այն խուժանի առաջ, որի կյանքի խորհուրդն ինձ համար այնքան թանկ է և սուրբ:

Բայց բանն այն է, որ դուք սուտ եք ասում...

Ո՛չ, պ. Գրող, իմ նամակում գործ ածած խուժանական բառը վերաբերում է ձեզ և ձեր ընկերներին: Ես իսկի չեմ էլ մտածել ձեզ համեմատել այն խուժանի հետ, որի հարագատ զավակն եմ ես, որովհետև ձեր և՛ այն խուժանի մեջ սար ու ձորեր կան» (6, 86): Հպարտությամբ ընդգծելով ժողովրդից իր ծագումը՝ Թումանյանը պարզաբանում է, որ իր խոսքը վերաբերել

² Պ. Մ և ա կ. Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1974, էջ 360:

³ «Մշակ» (Թիֆլիս), 5. IV. 1897:

է ոչ թե կոնկրետ Շիրվանզադեի, այլ առհասարակ հեղինակի նկատմամբ գործած անարդարությունը:

Թումանյան մարդուն և հրապարակախոսին բնորոշ էր պայքարի մեջ մտնել այլոց համար և հատուցել սեփական շահով, նույնիսկ կյանքով ու առողջությամբ: Մկզբունքայնությունն ու ուղղամտությունը մշտապես վնասում էին նրան, և ոչ միայն բարոյապես: Շիրվանզադեի իրավունքը պաշտպանելու համար բանաստեղծին հասցվում են անձնական վիրավորանքներ և նյութական վնաս, ոտնահարվում է նրա արժանապատվությունը⁴:

Թումանյանը հեղինակային իրավունքի հարցերին առնչվող սուր բանավեճ է ունենում նաև 1904 թ. աշնանը: Պատճառներից մեկը դասագիրք կազմողների բացարձակ ազատությունն էր՝ գրողների մանկական երկերը՝ առանց հեղինակների համաձայնության, փոփոխված ներկայացնելու գործոնը: Ժամանակին բազմաթիվ էին դասագրքերում հեղինակային իրավունքի խախտման օրինակները: Նկատի ունենալով «Հայոց լեզու, Բ տարի» (Թիֆլիս, 1895) և «Մայրենի լեզու» (Թիֆլիս, 1904) դասագրքերի կազմողներ Հ. Ճաղարբեկյանին և Նիկ. Տեր-Ղևոնդյանին՝ Թումանյանը 1904 թ. նոյեմբերի 27-ին «Մշակում» գրում է. «Կան մի տեսակ շփոթողներ էլ, որ ինձ շփոթում են ... իրանց հետ... Վերցնում են իմ ոտանավորները, փոփոխում են, ինչպես քեֆներն է տալիս... արգելում են այսուհետև օգտվելու իմ ոտանավորներից առանց իմ համաձայնությունն առնելու» (6, 137): Մոտ երկու շաբաթ անց, փորձելով արդարանալ, Նիկ. Տեր-Ղևոնդյանը բանաստեղծի դժգոհությանը հակադարձում է իր առարկությունները. «Պ. Հովհաննես Թումանյանի կտրական արգելքի դիմաց ես պետք է նույնքան կտրական ձևով դնեմ իմ պատասխանները... Առաջին ես այդ ոտանավորից դուրս եմ ձգել մի քանի տող... երկրորդ՝ փոխել եմ

⁴ «Մշակը» 1897 թ. ապրիլի 10-ին հրապարակում է հերթական մի սուտ՝ Հրատարակչական ընկերությանը Թումանյանի՝ չորս տարի շարունակ 60 ռուբլի պարտք լինելու և այն վերադարձնելու մտադրություն չունենալու մասին: Իրականում բանաստեղծը պարտքը վճարել էր ամբողջությամբ. մի մասը առձեռն, իսկ մյուս մասը՝ գրավոր ձևակերպվել էր իբրև կանխավճար Հրատարակչական ընկերությունից Վ. Գ. Բելինսկու «Լերմոնտովի բանաստեղծությունները» հոդվածը թարգմանելու նոր պատվերի դիմաց: Նա սկսել էր աշխատանքը և ըստ ամենայնի թարգմանել շատ ավելին, քան կանխավճարով էր նախատեսված, այդ պատճառով նույն օրը՝ ապրիլի 10-ին, դիմում է Հրատարակչական ընկերության վարչությանը՝ պարզելու համար տպագրված լուրի թյուրիմացություն, թե նենգ գրպարտություն լինելը: Նրա դիմումին ընկերությունը պատասխանում է թիվ 150 գրությամբ. «Ձեր առաջարկած հարցերը չեն վերաբերում վարչության, այլ «Մշակի» խմբագրությանը, որին և կարող եք դիմել» (6, 93): Տե՛ս նաև Հայաստանի ազգային արխիվ, Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկ. ֆ., -30, գ. 12, էջ 179: Փաստորեն, ընկերությունն արձանագրում է գրողի իրավացիությունը, սակայն հարկ չի համարում միջամտել՝ բյուրոկրատական խուսազրության ձևով: Այդ անտարբերությունը գրկում է գրողին պաշտոնական գրավոր պատասխանով գրպարտությունը հերքելու հնարավորությունից: Բանաստեղծը վրդովված դադարեցնում է իր հարաբերությունն ընկերության հետ, «որ այդպես է ճանաչում իր հետ գործ ունեցողի իրավունքը և այդքան անփույթ է գտնվում դեպի գրողի դատն ու պատիվը» (6, 91): Ընկերությանն ուղղված հրաժարական նամակի հետ նա վերադարձնում է որպես կանխավճար ձևակերպված 53 ռուբլի 52 կոպեկ գումարը և թիվ 900 գրություն-պայմանագիրը Բելինսկու հոդվածի թարգմանության մասին. «Ես միայն զգացունքներով կարող եմ կապված լինել ընկերության հետ և ոչ թե թարգմանության պատվերներով, իսկ երբ զգացումները վերացած են մեջտեղից, մեր մեջ չի կարող լինել որևէ հարաբերություն» (6, 92): Տե՛ս նաև՝ Գ. Հ ա ղ ո թ յ ո լ ն յ ա ն. Մի քաղաքի պատմություն. - «Էջմիածին», 1948, -3-4, էջ 68-73:

նրա մեջ եղած ռամկական բառերն ու ոճերը... երրորդ՝ տեղ-տեղ ստղերի մեջ պակասացրել եմ մի-մի վանկ»⁵:

Թումանյանի՝ խմբագրությանն հասցեագրված «Պ. Նիկ. Տեր-Ղևոնդյանը և իմ «Շունն ու Կատուն» պատասխան-նամակը չի ուշանում (գրում է դեկտեմբերի 15-ին, տպագրում դեկտեմբերի 17-ին՝ «Մշակում»): Տեր-Ղևոնդյանի խոսքերով, ինքը՝ որպես երկար տարիներ վերահրատարակվող դասագրքի կազմող և հրատարակիչ, երբեք չէր հանդիպել յուրաքանչյուր բառը այդպիսի կրթոստությամբ պաշտպանող որևէ հեղինակի, թեև նույն ոգով «սիրունացրել էր» շատերի երկերը. «Երեսուն և հինգ տարի է, – ասում է նա, – ես հետևում եմ... գրականության ընթացքին... չեմ հիշում մի մարդ, որ այնպես ճայթյունով իր «ես-ը» հրապարակ հանած լինի, ինչպես ... պ. Հովհաննես Թումանյանը»⁶:

Տեր-Ղևոնդյանը վահան էր դարձնում գործող օրենքները և օգտվում նրանց անկատարությունից. «Պ. Հովհաննես Թումանյանի հրամանը ես ինձ համար պարտավորեցուցիչ չեմ համարում. դասագիրք կազմողների արտոնությունները պարոնի կարծածից շատ ավելի ընդարձակ են...»: «Վ. Այդ օրենքների մասին Տեր-Ղևոնդյանը հիշատակել և դրանց ետևում պատասպարվել էր նաև «Կենտրոնական» գրավաճառանոցում բանաստեղծի հետ բանավոր գրույց-բանավեճի ընթացքում՝ 1904 թ. դեկտեմբերին, Մարտիրոսյանի տպարանում խոստացել էր «ապագայում հարմարվել նրա ցանկություններին» (9, 138, 423): Մակայն խոստումը չէր կատարել: Թումանյանն առաջարկում է փոխել այն օրենքները, որոնք նպաստում են հեղինակի իրավունքի ոտնահարմանը: «...Անարդարություն է արդեն, որ կարող է նա – դասագիրք կազմողը – օգտվել, շահ ստանալ հեղինակի գործից՝ առանց մասնակից անելու գրվածքի տիրոջը, թող ինչ օրենքի անունով ուզում է այդ կատարվի: Օրենքներ կան, որոնցով ամոթ է օգտվել» (6, 138): Նիկ. Տեր-Ղևոնդյանի դասագրքում Գևորգ Դեղդեղյանի հանրահայտ «Ծիծեռնակը» տպագրվել էր Ռ. Պատկանյանի անունով: Զարմանալի կլիներ, որ գրական-լրագրողական էթիկան պահպանվեր նման մտածելակերպ ունեցող և այդպիսի խախտումները օրինաչափություն համարող մեկի համար: Հեզնելով բանաստեղծի արտաքին տեսքը, նրա նիհարությունը՝ Նիկ. Տեր-Ղևոնդյանը գրում է. «Նախ հագիվ թե մեր դասագիրք հորինողներից մեկը երբևիցե ցանկություն ունեցած լինի իրան փոխս գցել Թումանյանի հետ: Գոնե ես նրան այնքան վտիտ մարդ եմ համարել, որ երբեք չէի կամենա նրա կաշվի մեջ տեղավորվել»⁸:

Ըստ գրողի պատասխանի՝ այդ պարոնն ավելի լավ է «բնավ մտքովն անց չկացնի իրան համեմատելու թեկուզ ամենավտիտի հետ այն մարդկանցից, որոնց փշրանքներով առուտուր է անում, այլ աշխատի այդ փշրանքներից օգտվել զգույշ, հարգե ստեղծագործություն և սեփականություն ասված բառերը և երբեք չսիրունացնե ուրիշի գործը: Եվ թող

⁵ «Մշակ», 7. XII. 1904:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

գոհ լինի նրանով, որ ինքն ավելի շատ է ստանում իր անշնորհքության համար, քան հայ գրողը իր շնորհքի համար» (6, 141):

Տեր-Ղևոնդյանը, նեղսրտելով, առաքինի ու ազնվաբարո մարդու կեցվածք ընդունելով, հրապարակավ հայտարարում է. «...Որպեսզի պ. Հովհաննես Թումանյանի խաղաղությունը չվրդովվի, ես խոստանում եմ նրանից վերցրած չարաբաստիկ «Շունն ու կատուն» դուրս ձգել իմ գրքից. ապագայի համար էլ ստորագրում եմ, երբեք չդիմել նրա քնարի օգնությանը»⁹: 1912 թ. իր «Մայրենի լեզու» դասագրքից նա հանում է Թումանյանի «Շունն ու կատուն», իսկ առաջաբանում հայտնում է, որ ինքն այլևս չի տպագրելու նրա երկերը: Մակայն սույն բանավեճի ընթացքում Տեր-Ղևոնդյանը դասագրքում զետեղում է Թումանյանի «Արծիվն ու կաղնին» բանաստեղծությունը Ալ. Ծատուրյանի անվան տակ: Երևույթը, ինչ խոսք, դարձյալ վրդովվում է բանաստեղծին, և նա անմիջապես պատասխանում է, սակայն ինչպես հաճախ նման դեպքերում, զգալով հակառակորդի չնչինությունը, զայրույթը հանձնում է թղթին, բայց չի տպագրում: Այդ սևագրության մեջ Թումանյանը ներկայացնում է դասագիրք կազմողի հոգեբանությունը. «Կյանքը նյութ է հեղինակի համար, նա օգտվում է կյանքից և հեղինակ է, իսկ ես օգտվում եմ բոլոր հեղինակներից, ուրեմն ես հեղինակների հեղինակն եմ: Այդպես էլ մտածելով՝ ձեռն ընկածը այլանդակում է անաստված կերպով կամ թե չէ հեղինակին գրկում է հեղինակության իրավունքից – տակը դնում է մի ուրիշ մարդու անուն» (6, 421): Թումանյանն իրեն այնքան բնորոշ հումորով հեզնում է. «Մի անգամ բողոքեցի, թե ոտանավորս մի՛ փոխիր, հետևանքն այն եղավ, որ ինձ էլ փոխեց: Հիմի էլ որ բողոքեմ, թե ինձ մի՛ փոխիր, ով գիտի սրանից ինչ դուրս կգա» (6, 424):

Բանաստեղծն այլևս չի պատասխանում Տեր-Ղևոնդյանին՝ քաջ գիտակցելով «Հասկացողին՝ մեկ, չհասկացողին՝ հազար ու մեկ» առածի խորհուրդն ու նույն անձի հետ նույն հարցի շուրջ բանավեճը համարում է միանգամայն անիմաստ և անօգուտ. «Եվ ի՞նչ կարող ես անել» (6, 424): Ու քանի որ օրենքները չէին պաշտպանում հեղինակին, Թումանյանը փորձում էր խոսքն ուղղել և ապավինել մարդու խղճին ու բանականությանը: Ահա թե ինչու նա իր հողվածը վերնագրել էր «Բարոյական օրենք», որտեղ գրում էր. «Գործը մնում է մարդու խղճմտանքին ու ամոթին, ուրիշ խոսքով – բարոյական օրենքին» (6, 306): Գրողն ինքն էր հաստատում օրենք՝ դառնալով միաժամանակ օրինախախտ և օրինաստեղծ: Նա իրավացի էր. «Օրենքներ կան, որոնցով ամոթ է օգտվել» (6, 138): Միշտ բոլոր հարցերում բարոյականություն էր դարձնում չափանիշը այնտեղ, որտեղ չէր գործում կամ բացակայում էր օրենքը և ասում էր. «Այս բարոյական օրենքն է, որ ապահովելու է զանազան երկրներում հայ գրողի, հայ գեղարվեստագետի ու հայ գիտնականի գրական-գեղարվեստական թե գիտական գործերի իրավունքը և դրանով էլ ապահովելու է նրանց զարգացումը» (6, 307):

⁹ Նույն տեղում:

Բանաստեղծի հրապարակախոսական ժառանգության կարևորագույն փուլը նշանավորվեց «Հորիզոն» լրագրի հրատարակությամբ, և նրա հիմնադրման առաջին իսկ օրերից՝ 1909 թ. օգոստոսից բանաստեղծը դարձավ թերթի ակտիվ աշխատակիցը: Շուրջ տասը տարի «Հորիզոնն» էր նրա էլույթների հիմնական ամբիոնը, իսկ 1910 – 1911 թթ. ստանձնելով «Հորիզոնի» խմբագրի պաշտոնը՝ գրողը մխրճվեց հրապարակախոսության ասպարեզ: Այս շրջանում «Հորիզոնը» հայ գրողներին անհրաժեշտ էր հատկապես «Մշակի»՝ հալածանքներին պատասխանելու հնարավորություն ընձեռելու համար¹⁰: Թումանյանի էլույթները քաղաքակիրթ առնչակցման ու բարեփոխումների հույս առաջացրին, սակայն նա չխուսափեց բազմաթիվ հրապարակային, հաճախ անպտուղ բանավեճերից: Բանաստեղծը «Հորիզոնը» դարձրեց նաև հայոց լեզվի մաքրության, նրա զարգացման, ուղղագրությանը վերաբերող լեզվագիտական բազմազան խնդիրներ արծարծող ամբիոն: Լրագրի էջերում ծավալվեց բանավեճ բառապաշարի հարստացման աղբյուրների, բարբառների և ժողովրդախոսակցական լեզվի, փոխառություններն որչափ և ինչպես գործածելու հարցերի շուրջ: Լեզվի հարստացման հարցում կարևորում էր ինչպես բարբառների, այնպես էլ փոխառությունների դերը:

1910 թ. մայիսի 14-ին «Հորիզոնում» տպագրված գրողի «Լեզվական փոխառությունները» հոդվածի առիթը Ա. Մեղրյանի «Մեր մանկական գրականությունը և հայոց լեզուն» հրապարակումն էր¹¹: Վերջինիս հեղինակն ընդդիմանում էր գրական լեզվում խոսակցական լեզվի որոշ տարրերին, նաև փոխառությունների գործածությանը, մասնավորապես, մանկական գրականության մեջ: Հոդվածագիրը խոսքը մասնավորեցնում էր՝ Թումանյանի և Բսահակյանի գեղարվեստական լեզվի բառապաշարից բերելով ջան, ջիգար, յար, յարաբ, դարիբ, խաթր, մուշտարի, մուրազ, մարալ, ջեյրան փոխառյալ բառերի գործածության օրինակները: Մեղրյանը դատապարտում էր թե՛ օտար, թե՛ «գավառական բառերի» գործածությունը: «...Բայց հո չի՞ կարելի ամեն բան էլ թարգմանել, – հարցնում է բանաստեղծը նրան, – էքսպրոպրիատորը՝ ճողոպրիստ... տրամվայը քարշակ անվանել... կամ ֆրակը պոչագգեստ... Ո՛չ. թե՛ ժողովրդական, թե՛ գրական լեզվի մեջ լեզվական փոխառությունները եղել են միշտ, կլինեն միշտ... միայն թե պետք է իմանալ շնորհքով, խելացի առնել ու տեղը գործածել, ահա խնդիրը» (6, 201):

Տարածայնությունների հիմնական պատճառն այն էր, որ Մեղրյանն ընդունում էր արևմտյան լեզուներից կատարվող փոխառությունների բնականությունը, սակայն մերժում էր արևելյան լեզուներից եկող բառերի գործածությունը: «Ուշացած պատասխան Հովհ. Թումանյանին» վերնագրով

¹⁰ «Հորիզոնը» նախ և առաջ Թումանյանի շնորհիվ շատերի համար ստեղծեց «Մշակի» գրական հեղձուցիչ մթնոլորտից դուրս գալու հնարավորություն: Շիրվանզադեի խոսքերով՝ «Հորիզոնը» ոչ միայն գրողների, այլև «գրականագետների գերդաստան է», որի դռները միշտ փակ են լինելու «ծախու գրչակների ու մատնիչների» համար ...Լավ է, որ բոլոր գրողներս խմբվել ենք և բարեկամացել, ի՞նչ կլինեք իմ վիճակը, եթե չլինեք Աղայանի, Ահարոնյանի, Թումանյանի, Լեոյի շրջանը» (Շ ի ը վ ա ն գ ա դ է. Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 10, Երևան, 1962, էջ 689):

¹¹ Տե՛ս «Լույս» (շաբաթաթերթ, Նոր Նախիջևան), 7. III. 1910:

հողվածում Մեղրյան գրում է՝ այդ լեզուների միջև «Մարեր, ձորեր տարբերություն կա... Ես հակառակ չեմ եվրոպական միջազգային բառերի գործածությանը»¹²: Նա Թումանյանի մեծագույն սխալը համարում է «հենց էն գլխից լեզվի մաքրության խնդրի յուրաձև ըմբռնումը...»¹³: Հեղինակն իր հողվածը կարող էր տպագրել Նոր Նախիջևանում կամ Թիֆլիսի որևէ այլ լրագրում, սակայն ուղարկում է «Հորիզոնին», համոզված, որ «Ղետք է լսել և հակառակ կողմին» լատինական առածը «հավասարապես հարգելի է թե՛ «Հորիզոնի» խմբագրության և թե՛ Հովհ. Թումանյանի համար»¹⁴: Անշուշտ, գրողը հարգում է բանավիճող կողմի ցանկությունը¹⁵: Նրան վրդովում էր հատկապես Արևելքի ու Արևմուտքի հակադրությունը. «Դե հիմի երեսներդ արեք դեպի Արևելք, – գրում է նա, – Ձեզ ո՞վ ասավ, պ. Մեղրյան, որ եվրոպական ազգերն ազգեր են և կարող են միջազգային բառեր ունենալ, իսկ ասիական-արևելյան ազգերն ազգեր չեն և միջազգային բառեր ունենալու իրավունք չունեն ու չեն կարող ունենալ... Հայոց լեզվի կազմության խնդրում էն զիջումը, որ Դուք ակամա անում եք կուլտուրական Արևմուտքի առաջ, ես ուրախությամբ էն գլխից արել եմ և անում եմ թե՛ Արևմուտքի և թե՛ մանավանդ Արևելքի ու մեր ժողովրդական բարբառների առաջ» (6, 239): Թումանյանը փորձում է կոնկրետ օրինակներով համոզել ընդդիմախոսին, որ «անսիրտ ու անճաշակ է» բոլոր բառերը «մաքուր հայերենով» թարգմանելը. «...Այսուհետև փոխանակ ախպեր ջան կամ Գրիգոր ջան ասելու, մաքուր հայերենով կասենք հոգյակ եղբայր կամ հոգյակ Գրիգոր, կամ թե չէ քեֆ անելիս, ներողություն... իրախճան անելիս կամ առհասարակ ուրախանալիս փոխանակ «ջա ն» բացականչելու, կկանչենք «հոգյակ»...» (6, 239):

Մեղրյան–Թումանյան բանավեճում, եթե կոնկրետ բառերի գործածությանն անդրադարձնալու լինենք, որոշ բառերի հարցում, անշուշտ, իրավացի կլինի Մեղրյանը: Սակայն բանաստեղծը միանգամայն արդարացի էր խնդրի համակարգային լեզվաբանական էությունը ներկայացնելիս: Բանավեճին արձագանքում է նաև Ներսիսյան դպրոցի հայերենի և հայ գրականության ուսուցիչ Մամբրե Մատենճյանը: Նա շահագրգիռ բոլոր կողմերին կոչ է անում մասնակցել օգտաշահ բանավեճին¹⁶:

Թեև Մատենճյանը ստանձնում է «դեռևս հանդիսականի» դեր, սակայն գրողի հողվածի մեջ մատնանշում է «փաստական մի խոշոր սխալ», որը պոետի կողմից Արքովյանի անվան հիշատակությունն էր¹⁷: Թումանյանը բանավեճի թարմ հետքե-

¹² «Հորիզոն», 31. VII. 1910:

¹³ «Հորիզոն», 1. VIII. 1910:

¹⁴ «Հորիզոն», 31. VII. 1910:

¹⁵ Այդ շրջանում բազմաթիվ լրագրեր իրենց դեմ ուղղված հողվածները չէին ընդունում, հատկապես եթե բանավիճող կողմն աշխատակցում էր կուսակցական այլ ուղղվածություն ունեցող լրագրին. յուրաքանչյուրի խոսքը տպագրվում էր նախասիրած թերթի էջերում, իսկ պատասխանը հայտնվում էր հակառակորդ լրագրի համարներում: Մեղրյանի հողվածը ստանալուց անմիջապես հետո այն տպագրվում է շաբաթ և կիրակի օրերի համարներում (հուլիսի 31 և օգոստոսի 1), իսկ Թումանյանի «Վոսգ պատասխան պ. Մեղրյանին» հողվածը լույս է տեսնում մի շաբաթ անց օգոստոսի 8-ին:

¹⁶ «Հորիզոն», 19. VIII. 1910:

¹⁷ Նույն տեղում:

րով անմիջապես պատասխանում է Մատենճյանին «Միսալ է» հոդվածով: Մակայն մտափոխվում է և տպագրության չի հանձնում¹⁸:

«Հորիզոնի» սեպտեմբերի 11-ի, 15-ի և 16-ի համարներում վերստին զետեղում է իր դեմ ուղղված Մեղրյանի «Իմ ընթերցողին» խորագրով ծավալուն հոդվածը: Հեղինակը բանակոչվր շարունակելու պատճառը պայմանավորում է Թումանյանի՝ գրող և մանկագիր լինելու հանգամանքով: Բանաստեղծի «Էլի սխալվելու» պատճառը Մեղրյանը տեսնում էր նրա անլուրջ վերաբերմունքի մեջ: Այստեղ հոդվածագրի մեջ խոսում էր վիրավորված արժանապատվությունը, քանի որ Թումանյանի հոդվածի վերնագրի մեջ («Վռագ պատասխան պ. Մեղրյանին») նա տեսնում էր «անհոգության, թե արհամարհանքի մի շեշտ»: «...Հոդվածն սկսվել է վռագ, դատողություններն արվում են վռագ, եզրակացությունը՝ վռագ», - գրում է Մեղրյանը: Նա Թումանյանին հռչակում է լեզվի զարգացման արուխանական «ստրկացնող ուղղության ներկայացուցիչ», «Արևելքի մոլի պաշտպան» և «թորքամուլ»՝ «ջանի պոչից կախ ընկնելու» համար:

Թումանյանն իր խմբագրած թերթի էջերում կարող էր տպագրել նման մեղադրանքներ իր հասցեին և նույնիսկ դրանց չպատասխանել, որովհետև մեկ անգամ արդեն ներկայացրել էր ասելիքը, սկզբունքորեն նոր հարցադրում բանավիճողը չէր կատարել, իսկ իր անձի նկատմամբ զանազան «մեղադրանքները» նա չէր կարևորում, որովհետև կապ չունեին խնդրո առարկայի հետ:

Լեզվական խնդիրների շուրջ Թումանյան-Մեղրյան տարաձայնությունները բանաստեղծի կյանքում այն հազվագյուտ բանավեճերից էր, որ երկու կողմից էլ մղվում էր ազնիվ ու սկզբունքային դիրքորոշումներով, լեզվի զարգացման լուրջ մտահոգություններով և անկեղծ անհանգստությամբ: Այդ պատճառով էլ այն չվերաճեց անձնական վիրավորանքների, զերծ մնաց անհաշտ անհանդուրժողականությունից, թեև կողմերից ոչ մեկը մյուսին չհամոզեց: Արևելյանի և արևմտյանի բնեռացումը չհաղթահարած որևէ գործիչ չէր կարող իր միատուղիվածությամբ, նեղ ու սահմանափակ աշխարհընկալմամբ արևելամետ կամ արևմտամետ դարձնել հայ ազգային արվեստի ցանկացած հանճարի, այն էլ ազգային այնպիսի մեծության, սահմանախախտ ու սահմանարկու բանաստեղծի, ինչպիսին Թումանյանն էր:

1911 թ. հունվարի սկզբին Գրիգոր Չալխուշյանի՝ «Ճեմարանի և թեմական դպրոցների այժմյան վիճակը արժանի է մեր ամենալուրջ ուշադրությանը» երկարաշունչ խորագրով հոդվածում արված առաջարկն անհանգստացնում է Թումանյանին և նոր բանավեճի առիթ դառնում: Չալխուշյանը մերժում էր հոգևորականներից բացի որևէ այլ բնագավառի համար մասնագետ կրթելու հոգևոր դպրոցների իրավունքը՝ ասելով. «Ազգը կարիք

¹⁸ Պահպանված սևագրերից պարզ է դառնում, որ բանաստեղծին հուզել էր ոչ այնքան Մատենճյանի «Ճիշտ իր ժամանակին» վերոհիշյալ հոդվածը, այլ նրա տպագրությունից մոտ երկու շաբաթ առաջ՝ 1910 թ. օգոստոսի առաջին օրերին, «Հորիզոնում» հայտնած հետևյալ կարծիքը. «Հումերոս թարգմանել չի կարելի սովորական աշխարհաբարով... Ոմանք աշխատում են ճոխացնել մեր գավառական բարբառների կարկատաններով... (6, 467): Թումանյանը հանձին Մատենճյանի տեսնում էր բանավեճի հակառակ կողմում կանգնած Մեղրյանին համախոհ մտավորականի, ով իր կարծիքն վերագրում էր Խ. Աբովյանին և նրանից քաղվածքներ բերելով՝ փորձում պատասպարվել հեղինակությունների ետևում:

չունի բնավ իր լուման տալու՝ պահպանելու համար հոգևոր դպրոցներ»¹⁹: Նա հայտարարում է. «Ազգը իրավունք ունի սպասելու և պահանջելու, որ ճեմարանը և մեր հոգևոր դպրոցները ճեմարան և հոգևոր դպրոցներ մնան կամ... փակվեն»²⁰:

Թումանյանը, իր խոսքերով՝ «ցավից տառապող սիրտը բռնելով», հարցնում է, թե ինչո՞ւ ազգը «իր լուման այլևս չպիտի տա այդ դպրոցները պահպանելու: Ինչո՞ւ՞: Որտեղի՞ց և ի՞նչ պատճառով եղկելի Հովհաննես Կարբեցու ուրվականը հայտնվեց ..., և արվում է այս խավարային պահանջը, այն էլ ազգի անունից» (6, 290)²¹: «Ճեմարանի և թեմական դպրոցների մասին Գր. Չալխուշյանի առաջարկը» հոդվածը գրողի համեմատաբար ծավալուն հրապարակախոսական ելույթներից է և լույս է տեսել «Հորիզոնի» երեք համարներում (հունվարի 19, 21, 22): Պատճառը լրագրողական ոճին ոչ այնքան բնորոշ թումանյանական յուրահատուկ խոսքն էր՝ ճշգրիտ, փաստարկված, վավերագրերի աղբյուրագիտական հղումներով ու մեջբերումներով, գիտական մոտեցումներով: Լրագրային հոդվածի սահմաններում բանաստեղծը պատմագիտական մի քանի աշխատություններից, կառավարության գրություններից, հոգևոր դպրոցների կանոնադրությունից հղումներ է անում՝ նշելով էջ, տարեթիվ, վավերագրերի ստույգ ամսաթվեր, ապացուցում Աշտարակեցու, կոմս Ա. Խ. Բենկենդորֆի իրավացիությունը:

Եղիշե ավագ քահանա Գեղամյանը «Սուրհանդակի» էջերում իր «Անհիմն մեղադրանք»²² նկատողությամբ շտապում է հերքել Կարբեցու մասնակցությունը «միջնադարյան առաջարկին»՝ նշելով, որ վերջինիս հեղինակը եղել է «բարոն Ռոզեն»: Թումանյանը Գեղամյանին պատասխանում է «Հիմնավոր մեղադրանք» հոդվածով²³: Նրա խոսքը, ինչպես միշտ, այս անգամ էլ հազեցած էր հակափաստարկներով, պատմական փաստաթղթերի, ինչպես, օրինակ, 1836 թ. հոկտեմբերի 27-ի թիվ 524 գրության հիշատակությամբ,

¹⁹ «Մշակ», 9. I. 1911:

²⁰ Նույն տեղում:

²¹ Գրողը նկատի ուներ 1830-ական թվականներին նույն հարցի շուրջ տարաձայնությունները կաթողիկոս Հովհաննես Կարբեցու և ապագա հայրապետ Ներսես Աշտարակեցու միջև. վերջինս արտարավայրից ծառանում է Կարբեցու այն որոշման դեմ, թե Ներսիսյան դպրոցը միայն ապագա հոգևորականների համար պետք է սեմինարիայի դեր կատարի: Կարբեցին խրախուսվում էր ժամանակի իշխանությունների, մասնավորապես, Գովկասի կառավարչապետ Ա. Ա. Ռոզենի կողմից: Աշտարակեցին Քիշինկից 1838 թ. դիմել էր Ռուսաստանի ներքին գործերի նախարար Դ. Ն. Բլուդովին և խնդրել, որ, հաշվի առնելով հայ ժողովրդի հավատարմությունը ռուսական գահին, Ալեքսանդր Առաջինի և Նիկոլայ Առաջինի խոստումները՝ հայերին հովանավոր լինելու մասին՝ չլսել Կարբեցուն և չփակել հոգևոր դպրոցները ազգի մեծամասնության առջև (6, 292): Կարբեցու առաջարկին Պետերբուրգում դեմ էր դուրս եկել նաև ցարական պահնորդական կայսերական գրասենյակի III բաժանմունքի պետ կոմս Ա. Խ. Բենկենդորֆը:

²² Տե՛ս «Սուրհանդակ» (Թիֆլիս), 25. I. 1911:

²³ Նկատենք, որ բանաստեղծը հաճախ էր իր ընդդիմախոսներին պատասխանում՝ գործածելով նրանց իսկ ընտրած վերնագրային խոսքերը միանգամայն հակառակ իմաստով: Այդ կարգի վերնագրերից են. Գր. Վարդանյան. «Տխուր փաստեր», Թումանյան. «Տխուր Գ. Վ-ին»: Մեղրյան. «Ուշացած պատասխան Հովհ. Թումանյանին», Թումանյան. «Վռագ պատասխան պ. Մեղրյանին»: Կատոն. «Իմ պատասխանը Հ. Թումանյանին», Թումանյան. «Պատասխան պ. Կատոնին»: Ե. Գեղամյան. «Անհիմն մեղադրանք», Թումանյան. «Հիմնավոր մեղադրանք»:

Ռուսաստանի ներքին գործերի նախարար Դ. Ն. Բլուդովին ուղղված Ա. Ա. Ռոզենի նամակի՝ «... Я вполне разделяю мнение патриарха Иоаннеса» տողերով: Ապահովելով սեփական փաստերի հիմքերի անխոցելիությունը՝ գրողը մատնացույց է անում հակընդդեմ տեսակետի հիմնավորումների բացակայությունը և մերկապարանոց հայտարարությունների սնանկությունը (6, 298):

Չայխուշյանը հարձակվողի ու մեղադրողի դիրք է բռնում: Խուսանավելով խնդրո բուն առարկայից՝ փորձում է շեղել բանավեճի ուղղությունը. «Ասում են՝ աշակերտները չեն ուզում հաճախել եկեղեցի, երգել պատարագի ժամանակ, անգամ չեն ուզում սովորել կրոն»²⁴: Ընդդիմախոսը, դուրս գալով գրողի բազմակողմանի փաստարկումների և ներգործուն խոսքի ուժի դեմ, ինքնակամ դատապարտվում է ձախողման: Բանաստեղծը հակադարձում է. «Ասում են... Բսկ եթե չեն ասում: Էն ժամանակ ի նչ կանեք, պ. Չայխուշյան:

Սա ի նչ բան է, աստծու սիրուն, «ասում են», «կասեն», «գուցե» և դրանց անվանել էակա ն, և դրանց վրա հիմնել դատավճի ռ, և այն էլ ազգի կողմից» (6, 303–304):

Որևէ երեխայի առջև դպրոցի դռները փակելու համար ցանկացած առաջարկ բանաստեղծը որակում էր «խավարամիտ», «միջնադարյան», «անհեթեթ»: Պահանջելով թեմական դպրոցների դռները բացել ազգի մեծամասնության առջև՝ Թումանյանը նույն օրերին մատնանշում էր մանկավարժների ու առհասարակ դպրոցական գործում եղած մի շարք թերություններ: Ուսուցիչների՝ հայերենին լավ չտիրապետելու մասին էր նրա «Հայերեն չգիտեն» հոդվածը վերաբերում էր հատկապես այն ուսուցիչներին, ովքեր «դուրս են եկել թեմական դպրոցներից և Ներսիսյան դպրոցից ու ձեմարանից» (6, 226): Բանաստեղծն արձանագրել էր նրանց տգիտությունը մայրենի լեզվից: Նա «չափազանց տխուր» բնորոշումն էր տալիս այն երևույթին, որ ուսուցիչները «չնչին բացառությամբ» ոչ չկանոնավոր շարադրել գիտեն, ոչ տիրապետում են լեզվական համաձայնություններին, ոչ էլ ուղղագրական կանոններին. «Լեզվական անտանելի սխալներ են անում» (6, 223): «Փորձի համար մի շարադրություն սովեք... կտեսնեք, որ փորձանքի մեջ ձգեցիք... հասարակ համաձայնություններ չեն կարողանում հաշտեցնել... իսկ եթե բարդ նախադասություններ պատահեցին, էդ հո արդեն միևնույն է, թե ընկան մի անելանելի լարհրինթոսի մեջ... չգիտեն և կարգին հայերեն խոսել...» (6, 226):

Բավական է Թումանյանը որևէ հարց բարձրացներ հրապարակայնորեն, և այն միանգամից ձեռք էր բերում հասարակական հնչողություն: Նա ձգտում էր համախմբել այն ուժերին, որոնք կարող էին կոնկրետ լուծումներ առաջարկել սովյալ հարցի շուրջ: «Հայերեն չգիտեն» հոդվածում դիմում է ժամանակի հայտնի բանասերներին՝ լեզվաբաններին, մասնավորապես, այդ հարցում խիստ շահագրգիռ Մ. Աբեղյանին և Ստ. Մայիսայանին, որպեսզի համատեղ որոնեն վիճակը շտկելու ուղիներ: Տվյալ դեպքում նրա մտահոգությանն արձագանքեցին ոչ միայն իր բաց

²⁴ «Մշակ», 9. II. 1911:

նամակի հասցեատերերը՝ «Ճեմարանի հայկաբան» Մ. Աբեղյանը և Ստ. Մալխասյանը: Նամակը շարժառիթ դարձավ մի շարք այլ մտավորականների մտորումների, տարակարծությունների: Արձագանքեցին Ա. Բրուսյանը՝ «Ինչու՞ հայերեն չգիտեն»²⁵, Ա. Նազարյանը՝ «Ինչու՞ չեն իմանում հայերեն խոսել և գրել»²⁶, Շիրվանգադեն՝ «Ցավալի է»²⁷, Հ. Երիցյանը՝ «Որտեղից գիտենանք, որ չեն սովորեցրել»²⁸, Միմ. Համայանը՝ «Հայերեն չգիտենք»²⁹ հողվածներով: Գրողը բարձրացրել էր հայ ժողովրդի համար ժամանակի ամենակարևոր հարցերից մեկը՝ հայերենին տիրապետելու, այն մշակելու ու զարգացնելու հրամայականը, և բնական է, որ առաջին արձագանքողներից մեկը պիտի լիներ Մանուկ Աբեղյանը: Նրա պատասխանն ամենաձավալուն էր բոլոր արձագանքների մեջ: Հողվածը վերնագրված էր «Մեր դպրոցական կյանքից»³⁰ և լույս տեսավ «Հորիզոնի» ինը համարներում: Օգոստոսի 18-ին Մ. Նազարյանը «Ինչու՞ չեն իմանում հայերեն խոսել և գրել» հողվածում իր դժգոհության ձայնն է միացնում Թումանյանին՝ ավելացնելով. «Շուշվո և Երևանի թեմական դպրոցները, կարելի է ասել, չեն տեսել հայերեն լեզվի տիրապետող և բարեխիղճ ուսուցիչներ...»³¹: Եթե Մ. Նազարյանի դիտարկումները պարզունակ ու միակողմանի էին, ապա Մ. Աբեղյանի «Մեր դպրոցական կյանքից» ծավալուն հողվածաշարը բավականին կարևոր հարցադրումներ էր անում: Հայոց լեզվի դասավանդման անբավարար մակարդակի պատճառներից մեկը նա հիմնավորում էր այն հանգամանքով, որ մինչև 1906–1907 թթ. հայոց լեզու ասելով միայն գրաբար էին հասկանում³²: Մ. Աբեղյանի հատկապես այս մտահոգությունն է անհանգստացրել Թումանյանին, և նա միանգամայն համամիտ էր բանասեր - մանկավարժի դիտողություններին: Հոկտեմբերի 3-ին նույն լրագրի էջերում Աբեղյանի նկարագրած երևույթի տխուր հետևանքներին արձագանքում է Հ. Երիցյանը «Որտեղից գիտենանք, որ չեն սովորեցրել» հողվածով: Հեղինակը գրում է. «Աշխարհիկ լեզվի հոտը չկար պ. Մալխասյանի մոտ: Եղիշե, Եզնիկ, Փարպեցի, Խորենացի, ահա նրա սրբության սրբոցը»: Հողվածագիրը, որ Ներսիսյան դպրոցում աշակերտել էր Մալխասյանին, դժգոհում էր պատմիչների երկերը գրաբարով լուսաբանելուց:

Աբեղյանը պարտադիր էր համարում գրաբարի ուսուցումը դպրոցներում, բայց ոչ աշխարհաբարի հաշվին: Մեծանուն բանասերը չէր կարող անտեսել նաև հայ գրականության դասավանդման կարևորությունը³³: Նա նշում էր նաև օտարամոլությունը և արհամարհանքը սեփական լեզվի

²⁵ «Հորիզոն», 11. VIII. 1910:

²⁶ «Հորիզոն», 18. VIII. 1910:

²⁷ «Հորիզոն», 13. X. 1910:

²⁸ «Հորիզոն», 3. X. 1910:

²⁹ «Հորիզոն», 29. X. 1910:

³⁰ «Հորիզոն», 31. VIII. 1910, 2, 3, 7, 15, 16, 17, 21, 22. IX. 1910: Տե՛ս նաև Մ. Հարությունյան. Մանուկ Աբեղյան: Գյանքն ու գործը, Երևան, 1970, էջ 69:

³¹ «Հորիզոն», 18. VIII. 1910:

³² «Հորիզոն», 16. IX. 1910:

³³ Աբեղյանն առաջարկում էր փոխել ոչ միայն լեզվի, այլև գրականության ծրագրերը, որովհետև վատահ էր. «... հայերենի ուսումը բարձրացնելու համար պետք է... ուժ տալ աշխարհաբարին և աշխարհաբար գրականությանը...» («Հորիզոն», 3. X. 1910):

նկատմամբ իբրև Թումանյանի սեպագանգած տխուր երևույթի «էական» և «ամենամեծ պատճառ»: Քանի դեռ հայերեն չիմանալը ամոթ չի համարվում, «ազգային-քաղաքական այլասերվածությունը» տարածվում է նաև դպրոցներում: Արեղյանն առաջարկում է դպրոցն այնպես բարեփոխել, որ «արտաքին ազդեցությունները պակասեն»³⁴:

Թումանյանի բարձրագրած խնդիրն իր արձագանքն է գտնում նաև հայաշատ այլ վայրերում, սակայն ոչ նույն մակարդակով և ոչ նույն ազնիվ մտահոգությամբ: Բնական է, որ հատկապես թեմական ուսուցիչները հակամետ չէին իրենց հասցեին արված քննադատությունն ընդունելու: Նոր Նախիջևանի թեմական դպրոցի ուսուցիչ Ավետիս Տեր-Հարությունյանը «Լույս» շաբաթաթերթում տպագրած «Հայերեն գիտցողին» հոդվածում գրում է. «Պ. Թումանյանն իբրև գրականությամբ հետաքրքրվող, իբրև լրագրական կյանքով զբաղվող, պիտի հասկացած և համոզված լիներ, որ լրագրական անձոռնի լեզուն մաքրողները հենց ճեմարանականներն ու թեմականավարտներն են, որոնց նա, քիչ բացառությամբ, քարկոծում է»³⁵: Հոդվածագիրն անցնում է հարձակման. նա «այլանդակ լեզվով գրվածներ» հանդիպում է միայն մամուլում, մասնավորապես «Հորիզոնի» էջերում և նրա խմբագրի՝ Թումանյանի հոդվածներում: Ըստ Տեր-Հարությունյանի՝ «այլանդակ» հայերենի գրության մեղավորները նախ ոչ ազգային, օտարալեզու դպրոցներում կրթություն ստացողներն են, «երկրորդ լեզվի մեջ նորություն մտցնելու ցավով բռնվածները... երրորդ մայրենի լեզուն չիմացող, բայց ուրիշներին սովորեցնել աշխատողները»³⁶: Ընդ որում, նա վերջիններիս շարքում առաջինը հիշատակում է Թումանյանի անունը: Տեր-Հարությունյանը բանաստեղծի լեզուն բնորոշում է իբրև «անձոռնի... ոչ գրական և ոչ էլ ժողովրդական... հայերեն չիմացողի լեզու»³⁷: Հետևաբար, նա գրողին իրավունք չի վերապահում «հրապարակ հանելու հայերեն չիմացողներին»³⁸:

Բանաստեղծի փառքը շատերին հանգիստ չէր տալիս հատկապես այդ շրջանում, երբ նրա տաղանդը հսկայական չափով դրսևորվեց նաև հրապարակագրության մեջ: Գրողի յուրաքանչյուր հոդվածը կամ խմբագրականը գրական մեծ շարժում էր առաջացնում, առիթ էր դառնում աշխույժ բանավեճերի: Մյսպես, ըստ Ավ. Տեր-Հարությունյանի՝ թեմական ուսուցիչների հայերեն չիմանալու բուն պատճառը Հովհաննես Թումանյանն էր, և հատկապես այն փաստը, որ պոետը համարձակվել է զբաղվել նաև հրապարակախոսությամբ: Մանկավարժ-լրագրող Ավ. Տեր-Հարությունյանը «Հայերեն գիտցողին» հոդվածը սկսում է «Հորիզոնի» նորանշանակ խմբագրի դեմ հարձակումով՝ նրա փառքն ու վայելած համաժողովրդական սերը վերագրելով ոչ թե բնատուր շնորհքին ու տաղանդին, այլ բախտին. «Պ. Հովհաննես Թումանյանը բախտավոր աստղի տակ ծնված մարդ է... ինչ-որ գրում է, նորություն է համարվում մեր գրականության մեջ և ...

³⁴ «Հորիզոն», 21. IX. 1910:

³⁵ «Լույս», 7. III. 1910:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում:

գողտրիկ հաճոյախոսալից գրախոսականներով վարձատրվում: Նա էլ շլացած իրեն համար կորստաբեր այդ խրախուսանքներից, նորանոր հաղթություններ տանելու տենչով բռնված, նույն թերություններով առաջ է գնում. այժմ էլ ուզում է հռչակվել իբրև հրապարակախոս, հանձն առնելով դրանով իր ուժերից վեր, դժվարին և ավելորդ մի աշխատանք: Նորապսակ հրապարակախոսն իր կարճատև գործունեության մեջ աշխատում է շարունակ նորություններ ասել, հայ ազգի վերքերը քրքրել. և միշտ էլ անհաջող»³⁹:

Ավ. Տեր-Հարությունյանի հոդվածը Թումանյանը կարդացել էր ամենայն ուշադրությամբ՝ «Լույս» շաբաթաթերթի անձնական օրինակի լուսանցքներում նշումներ կատարելով⁴⁰: Ավելին, զայրույթի պահին որոշել է պատասխանել նրան և ընթերցածի թարմ տպավորության տակ գրել է «Դժբախտ աստղի տակ ծնված մարդը» խորագրով հոդվածը: Սակայն մտափոխվել է և գրեթե պատրաստի պատասխանը չի հանձնել տպագրության: Պահպանվել է հոդվածի սևագիրը, ուր հեղինակն արձանագրում է. «Ես էլ, ինչպես հայոց բոլոր գրողները, ծնված եմ մի երկրում, ուր բախտավոր աստղը չի ժպտում, և մի «հաճոյախոսալից գրախոսականի վարձատրության» հետ դատապարտված եմ շատ ու շատ Ավ. Տեր-Հարությունյանների ծանր շունչը շնչելու» (6, 478): Հոդվածի այս պարբերության մեջ Թումանյանն արել է ուղղում: Սկզբում գրում է, որ ինքն էլ, ինչպես յուրաքանչյուր հայ գրող, ծնվել է ժամանակի անբարենպաստ պայմաններում՝ «դժբախտ աստղի տակ», սակայն հրաժարվում է այդ բառերից՝ իբրև գրողի արժանապատվությանն անհարիր արտահայտություն: Այնուհետև իր սուր գրչով փորձում է մեղմացնել ընդդիմախոսի՝ «Էս դժբախտի ցավը ու մխիթարել»՝ փաստելով, որ իր ստեղծագործությունները ոչ միշտ են վարձատրվում «գողտրիկ հաճոյախոսալից գրախոսականներով»: Նա գրում է. «Օրինակ՝ ես, ձեր խոսքով ասել, «գրականությամբ հետաքրքրվող եմ»: Ահա գրում եմ ու հրատարակում: ... Դուք էլ թերթ ունեք, մի թե՛ ձե՛ն էք հանել... կարծեմ «քննադատությամբ էք զբաղվում» և ի՛նչ էք գրել իմ մասին, միայն էն, թե ինչու են Հովհ. Թումանյանի «Մասունցի Դավիթը» համարում «Շահնամե»...

Ձեզ հավատացնում եմ, ես նրա համար չեմ «գրականությամբ հետաքրքրվում», որ մարդկանց մաղձը խառնեմ ու քունները կտրեմ, ընդհակառակը, միանգամայն ընդհակառակը...» (6, 479): Բանաստեղծը փորձում է մեղմել նաև իր՝ անվանի հրապարակախոս դատնալու և այդ ասպարեզում փառք ձեռք բերելու հոդվածագրի անհանգստությունը. «...Վախենում եք, որ ես «հռչակվեմ իբրև հրապարակախոս»: Դարձյալ ձեզ պետք է հանգստացնեմ, որ ես երբեք չեմ ուզեցել և չեմ ուզենա հռչակվեմ իբրև հրապարակախոս» (6, 480): Այնուամենայնիվ, զգալով իր մեծության առջև

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Բանաստեղծի դիտողություններն էին. «Ա. Ապացույց, որ միայն դուք էք խոսում «Հայերեն չգիտեն» առաջնորդողի մասին, Բ. Հոդվածից մեջբերելով «ընթերցողն էլ կկարծի, թե խոսքը Վրաստանի հայերի վրա է» նախադասությունը՝ գրել է. «Այս ոչ գրական և ոչ էլ ժողովրդական, այլ միայն հայերեն չմացողի լեզու է», ապա «տեսնել օր. <ինակ> ժող. <ովրդական> նյութերը» (6, 641):

հակառակորդի չնչինությունը, նրա՝ միայն անձնական վիրավորանքներ պարունակող քննադատությունը, Թումանյանը որոշում է պատասխանը չհրապարակել:

Խոսել Թումանյանի բանավիճային հողավածների մասին և շրջանցել դրամբյանիզմի դեմ նրա պայքարը, անհնար է, մանավանդ որ բազմիցս արծարծվել է միայն Ռուբեն Դրամբյանի դեմ բանաստեղծի էլույթները և գրեթե ուշադրության չեն արժանացել դրամբյանիզմին առնչվող մյուս ներկայացուցիչների՝ Մ. Բագրատունու, Մ. Պոտուրյանի, Ս. Համայանի, Տեր Եզնիկի և այլոց դեմ նրա պայքարը:

XX դարասկզբին Թումանյանը բարձրացրեց հայ հեքիաթագրության մակարդակը՝ հասցնելով գեղարվեստական կատարելության: Մի կողմից երեխաներն արտակարգ հափշտակությամբ էին կարդում նրա հեքիաթները, մյուս կողմից՝ «Մշակը» վիրավորական ու անհեթեթ մեղադրանքներ էր ներկայացնում թե՛ Թումանյան-հեքիաթագրին, թե՛ «Հասկերում» և «Լուսաբերում» տպագրվող երկերի մյուս հեղինակներին: «Մշակի» 1909 թ. հուլիսի 28-ի համարում լույս տեսավ Ռուբեն Դրամբյանի «Գրական մեծությունները բանագող» պարսավագիրը, որն ուղիղ մի շարքանց՝ օգոստոսի 5-ին և 6-ին, առիթ դարձավ բանաստեղծի ամենասուր բանավիճային էլույթներից մեկին՝ «Ոչ-գրական ոչնչությունները քննադատ» հոդվածին: Այն, լինելով Թումանյանի հրապարակային պատասխանը Դրամբյանին՝ միաժամանակ ժողովրդական բանահյուսության և գեղարվեստական գրականության հարաբերության հարցի շուրջ թումանյանական տեսության փայլուն արտահայտությունն էր: «Բանագողության» մեղադրանքը ներկայացվում էր ոչ միայն Թումանյանին, այլև նրա գրչակից ընկերներին, «Լուսաբերի» ու «Հասկերի» հեղինակներին: Դրամբյանի հոդվածը լի էր գրական կյանքում հայտնի հեղինակությունների՝ «մեծությունների» հանդեպ աստելությամբ ու չարությամբ, «լուրջ կրիտիկայով», նրանց խարազանելու, «սանձահարելու», «ամենախիստ ձևով», «կծու, խայթիչ լեզվով» հարվածելու, անվանարկելու կրքով ու մղումով: Թումանյանը հռչակվում էր քննադատական «մերկացումների» «կրթիչ ազդեցությանը» չենթարկվող մի բանագող, ով «մեր մտավոր կյանքի լճացման և մեր առաջադիմության խափանման» նշանն է, ազգային գործունեության «ավերիչ ժանտախտը», ում հեքիաթները «մեր կյանքի կեղտերն են»... Գողությունը շարունակվում է և երևի վերջ չի ունենայ... Բավական է,– գրում է Դրամբյանը:– Պետք է վերջ դնել այդ ավերիչ ժանտախտին... մեր մանուկ սերունդը կը հրաժարվեր ձեր տվածից սրտի խորին դառնությամբ, եթե իմանար, թե բանն ինչումն է»: «Լավ,– պատասխանում է նրան բանաստեղծը,– բայց դրա համար իմ դեմ էք դալմադալ անում, ո՞վ դուք մեռելների սիրահար ու կենդանիների թշնամի Դրամբյան» (6, 168): Հարձակման էր ենթարկվել ժողովրդական բանահյուսությունից օգտվելու գրողի իրավունքը: Նա խոստովանում է, որ իր պատասխանը գրելուց առաջ մեծ վարանքի մեջ էր. «...Լռեմ ու բանագողությունն ընդունեմ ինձ վրա, թե՞ պատասխան տամ սրան... Եվ, անշուշտ, ձեզ հետ վեճի բռնվելը շատ ավելի տգեղ է ու անպատվաբեր, բայց պատասխանեցի, որովհետև... դուք մեր կյանքում, դժբախտաբար, «սովորական երևույթ» եք, թեև միաժամանակ «միանգամայն ոչնչություն»» (6, 168): Ամեն անգամ գորշության ու տգիտության հանդիպելիս Թումանյանը ցավ էր ապրում, սակայն երբ այդ տգիտությանը գումարվում էր չարությունն ու նենգությունը, մարտնչելու մարմաջը, թույնն ու մաղձը, նա զայրանում էր: Տվյալ դեպքում տգիտությունը հավասարության նշան էր դնում

բանահավաքի տրնության և բանաստեղծի տաղանդի միջև: Հերթական անգամ գրողի առջև կանգնած էր ժամանակի երրորդական-չորրորդական կարգի մի լրագրող, որի անունը անմահացավ միայն Թումանյանի պատասխանի շնորհիվ: Նա դիմում է «գրական մեծություններ սանձահարող անսանձ փոքրությանը»՝ «չնչին մարդուկին», որի ներսում «մաղձը շարժվում է», և ասում. «Դուք մի որևէ Ռ. Դրամբյան չեք: Դուք մինը չեք: Դուք շատ եք: Դուք տիպ եք: Դուք էն պատիկ, մաղձոտ ու մութ հոգին եք, էն հավիտենական անկոչ պրոկուրորը, որ ... դատում ու դատապարտում է ամեն գործ ու գործիչ, առանց ճանաչելու, առանց ամաչելու» (6, 161):

Գրողը դրսևորում է բանահյուսական նյութի փայլուն իմացություն, մեծ սեր ժողովրդական կենդանի խոսքի հանդեպ. «Ես Լոռեցի եմ ու էն զլխից, ոչ «դիպվածով» սիրել ու հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեզենդներով, առակներով, և շատերն անգիր գիտեմ դեռ մանկուց» (6, 164): Նրան չի բավարարում բանասիրական հարուստ փաստարկների լեզվով և կոտ տրամաբանությամբ հակառակորդին պսակազերծելը, կեղծ ու սուտ մեղադրանքները բացահայտելը: Նա «հայոց դրամբյանիզմի» ագրեսիվ ու հավակնոտ արշավանքին հակադրում է գրականության և ժողովրդական բանահյուսության փոխհարաբերության տեսական հարցադրումները, ժողովրդական նյութի մշակման իր ընկալումները: Թումանյան-բանասերի և բանագետի համոզմունքով բանահյուսական նյութը մշակելիս գրողի նպատակը պետք է լինի նյութի ներքին բովանդակության հայտնագործումն ու իմաստավորումը⁴¹:

Դրամբյանի դեմ հողվածներում արտահայտվել են գրողի գեղագիտական հայացքները արվեստի տեսության հիմնահարցերից մեկի՝ ինչի և ինչպեսի մասին. «... Մի տեղ խնդիրն էն է, թե ինչ են ասում, իսկ մյուս տեղ, թե ինչպես են ասում» (6, 453): «Ինչպեսի» գաղտնիքը տեսնում էր մշակման արվեստի մեջ և ընդգծում, որ թե՛ եղածը վերցնելու շնորհքը, թե՛ ստացածը գնահատելու առաքինությունը քչերին է տրված:

Գրողի պատասխան հողվածներում ստեղծվում է տգետ ու սահմանափակ, նենգամիտ ու հավակնոտ քննադատի և պարզապես չար ու նախանձ մարդու գեղարվեստական տիպը, հավաքական կերպարը: Ցանկացած, և հատկապես բանավիճային հողվածում Թումանյան-հրապարակախոսը ներդաշնակ

⁴¹ Հաստատելով ազգային բանահյուսության գանձարանից ազատորեն օգտվելու գրողի անխախտ իրավունքը՝ Թումանյանը ժողովրդական նյութից վերստեղծված գեղարվեստական գործի արժեքը պայմանավորում էր օգտագործողի շնորհքով ու տաղանդով, քանզի «ծաղիկը դրած է մեջտեղը և նույն ծաղկից մեղուն մեղր է շինում, օձը՝ թույն» (6, 167) կամ. «Բայց ի՛նչ, աստծո ողորմությունը հասել է, որ դուք ծանոթ չեք արևելյան կամ արևմտյան, հունական կամ հելլենական առակախոսներին... էլ նույն ազգավներն ու նրանց պանիրները... էլ նույն աղվեսներն ու գայլերը և նրանց մեջ մի առակ էլ կա՝ էշն ու սոխակը, որի մեջ էշը սոխակին սովորեցնում է, թե ինչպես պետք է երգել» (6, 454): Հեքիաթների տարբերակների մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Վ ա թ դ ա ն յ ա ն. Հ. Թումանյանի հեքիաթները. ստեղծագործական պատմության հարցեր, Երևան, 1986, էջ 66–148:

միասնության մեջ էր Թումանյան-մարդու և Թումանյան-արվեստագետի հետ: Նա գրեթե միշտ ընդդիմախոսին կամ գաղափարական հակառակորդին բնութագրելիս ընդգծում էր դիմացինի մարդկային որակները: Դրամբյանը «անհոգի, տափակ ընթերցող», «տգետ», «չափը չճանաչող», «դիպվածական պարոն», չակերտավոր «ամենախիստ», «ո՛վ լուրջ կրիտիկոս» լինելուց բացի ստախոս է ու խաբեբա՝ «...համբակի թեթևամտությամբ և տափակ, փոքրիկ հոգու մաղձով ու թույնով, և պարզապես «ռչնչություն»: Թումանյանը իր բանավեճերում բազմիցս կրկնել է, որ միայն չհասկանալն ու սոցիալությունն են արժանի ներողամտության, («...Եթե սխալվել է, կամ տգետ է... ոչ մի դեպքում ես նրա դեմ չեի վեր կենալ» (6, 434), սակայն չէր հանդուրժում սուտն ու կեղծիքը, անագնավությունն ու չարությունը. («... Ո՛վ ամեն շնորհքի հավիտենական ռիտերիմ Դրամբյան... ամեն ազնիվ ու գեղեցիկ գործի չարախոս ու չարակամ Դրամբյան, և՛ ավա դ, անվերջ, անմահ հ Դրամբյան» (6, 168):

Թումանյանը չէր կասկածում, որ իր սուր, ոչնչացնող հողվածք կարթնացնի նոր դրամբյաններ: Պատասխանը չուշացավ: Հողվածի տպագրությունից (1909 թ. օգոստոսի 5–6) տասն օր հետո՝ օգոստոսի 16-ին, «Մշակի» էջերում լույս տեսավ Մուշեղ Բագրատունու «Գրական էթիկան գրական մեծությունների ձեռքում», իսկ օգոստոսի 27-ին՝ Ռ. Դրամբյանի «Իմ վերջին խոսքը Հովհաննես Թումանյանին» հողվածները: Մ. Բագրատունին «ջենտլմենության դասեր» էր տալիս բանաստեղծին՝ «կոպիտ» արտահայտությունների, զագրելի ոճ կիրառելու համար, կոչ էր անում լինել «մեծահոգի, լայնսիրտ և կորեկտ»: Իհարկե, Բագրատունին չի խնայում նաև Ռ. Դրամբյանին՝ նրա գրախոսականն անվանելով «մի կատարյալ պասկվիլ գրական մեծ կրիտիկայի հասցեին», իսկ հեղինակին՝ «կրիտիկոս դառնալ» ցանկացող անփորձ մեկը, որն անզգուշորեն իր ուժից վեր և «լրջության սահմանից» խիստ հեռու գործ էր ստանձնել և բանագող անվանել «մեր գրականության մեջ պատվավոր տեղ բռնած այնպիսի «մեծության», որպիսին է Հովհ. Թումանյանը»⁴²: Դրամբյանի բնորոշումները Բագրատունին որակում է ընդամենը «երեխայական հանդգություն», թեև «ավելի քան աններելի արարք»: Մինչդեռ Թումանյանի պատասխանը, նրա կարծիքով, գրական էթիկայի բացակայության և գրական մեծությունների փոքրագրության արտահայտություն էր: «... Մեզանում, – գրում է Մ. Բագրատունին, – միանգամայն գոյություն չունի գրական բարձր ու վսեմ էտիկան, կորեկտ ու ջենտլմենին հատուկ քաղաքավար վերաբերմունք գրչի մի անհատից դեպի մյուսը, ավելին կասենք, որքան մեզանում հաճախ գրական պոլիմիկա ու բանակոխիվ, նույնքան տպագրական խոսքի մեջ հայոյանքների նորանոր բառեր ու դարձվածքներ, այս դեպքում մեր հայ գրողները հանդես են գալիս իրանց կրքոտ, նեղսիրտ, բարկացկոտ, շուտ բռնկվող ու հայիոյիչ բնավորությամբ»⁴³: Ինքը Բագրատունին, խոսելով գրական էթիկայի պահպանման և անհրաժեշտության մասին, չի զլանում խախտել այն: Նա գրում է. «Եթե այդ երկու հակառակորդները նույն բոլորին իրար պատահեին փողոցում, գրական այդ կրիտիկան

⁴² «Մշակ», 16. VIII. 1909:

⁴³ Նույն տեղում:

իսկույն կը փոխվեր ասիական մեյդանային բեցենզիայի ու իրար կը հաջորդեին ձեռնափայտ, բռունցք ու գուցե և արագի»⁴⁴: Նա ընդունում է Թումանյանի բանասիրական փաստարկների ճշգրտությունը, իրավացի լինելը, սակայն դեմ է նրա «տեմպերամենտին», դեմ է հակառակորդին «հավիտենական անկոչ պրոկուրոր, անհոգի, տափակ, տգետ, ստախոս...», բեխարար պարոն, տխուր ծագում ունեցող խուզարկու, ոչնչություն, համբակ...» անվանելուն, համոզված է, որ և՛ մեծերը, և՛ փոքրերը խախտում են «գրական էտիկան»: Բանաստեղծը հարցնում է. «Հետաքրքրական է, ինչպե՞ս կը պատասխանե մի ռուս գրական տիտան, օրինակ, Լ. Տոլստոյը մի ռուս «փոքրիկ և գրական ոչնչություն կազմող Դրամբյանի՝ իր այդ վարմունքի համար»⁴⁵:

Թումանյանը Բագրատունուն պատասխանում է «Զայրույթի պատճառը», իսկ Դրամբյանին՝ «Զարության ու կեղծավորության դեմ» հողվածներով, որոնց միայն սնագրերն են պահպանվել: Գրողը դրանք գրեթե ավարտին է հասցրել, սակայն չի հանձնել տպագրության: Նույն ճակատագրին է արժանանում նաև հայր Մկրտիչ Պոտոլյանի «Բազմավեպ»-ում տպագրած «Հայ մամուլը 15 տարվա մեջ» հողվածի⁴⁶ պատասխանը: Մ. Բագրատունին «կոպիտ» և «հանդուգն» էր անվանել Թումանյանին:

Կարելի է միայն ենթադրել, թե բանաստեղծը ի՞նչ նկատառումներով այդ երեք հողվածները տպագրության չի հանձնել, թեև այդքան նյարդեր է քայքայել, այդքան ժամանակ, ուժ ու եռանդ ծախսել դրանք գրելու համար: Որպես բանաստեղծ՝ նա հավասարակշռված տաղանդ էր, բայց և զգացմունքային անձնավորություն, ում հոգում յուրաքանչյուր անարդարություն առաջացնում էր ընդվզող զգացմունքների բուռն պոռթկում, և նա բանավեճի տաք հետքերով իր խոհերն ու զգացմունքները հանձնում էր թղթին: Զայրանալիս նրա հոգեկան ներքին ուժերը շարժման մեջ էին դրվում և կենտրոնանում: Նա իրեն ուժեղ ու համարձակ էր զգում և գործելու ցանկություն էր ունենում թե՛ որևէ գաղափարով խանդավառվելիս, թե՛ զայրույթի պահերին: Նման իրավիճակներում հոգեբանական արգելքները, վիրավորանքները հասարակայնորեն արատավոր երևույթները հաղթահարելու բանաստեղծի եռանդը կրկնապատկվում էր, և այդպիսի ինքնաներշնչումը, անվերապահ արդարացի լինելու գիտակցությունը հանգեցնում էր գրողի կողմից հակառակորդի նկատմամբ բարոյահոգեբանական հաղթանակի: Պոետը պատասխանում էր գրեթե միշտ, որովհետև. «Բմ անունը Հովհաննես Թումանյան է, և ես պատասխան էի տալու էն ամենի համար, ինչ որ կրում է իմ ստորագրությունը» (6, 446): Սակայն զգացմունքների հորձանքին միշտ հաջորդում էր կշռադատված մոտեցում և հաղթում էր իրերին ու երևույթներին, իր հետ կատարվող ամեն ինչին «վերնից նայելու» տաղանդը: Նա արդեն հրապարակավ, բանասիրական հարուստ փաստարկներով ու պարզաբանումներով ապացուցել էր իր իրավացիությունը, նորից խնդրին անդրադառնալը կմեծացներ անարժան ընդդիմախոսների նշանակությունը («Մարդու հոգեառն էլ պետք է մեծ լինի») (6, 444): Հակաճառող ներհակաբանները նրա համար դատավորներ էին, ովքեր իրար գերազանցում էին տգիտությամբ, անճաշակությամբ, մա-

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ «Բազմավեպ» (Վենետիկ), 1909, թիվ 9, էջ 385–389:

նափանդ չարությամբ ու կեղծավորությամբ (6, 455), դատավորներ, որոնց դեմ ստիպված էր պայքարել, «Չարունակ տարրական բաներ» (6, 453) բացատրել: Ամեն անգամ «էդպես չեն դատում գրողներին» ասելով՝ «վայ-քննադատներին» բնորոշում էր որպես «աստծո պատիժ հայ գրողին ու գրականությանը»: Անարժաններին պատասխանելը նշանակում էր մի անգամ էլ ցույց տալ, «թե ինչ պատժով է պատժել երկինքը հայ գրողին ու հայ գրականությունը» (6, 455): Նա ոչ թե իր, այլ գրականության ծանր ճակատագիրն էր համարում, որ դրամբյանները քննադատում են, «ջենտլմեն բագրատունիները խրատում, իսկ հայր պտտությանները հաստատում» (6, 456): Թումանյանը վստահ էր, որ ոչ բոլորին, հատկապես թույլ ու կարճատես մարդկանց տրված չէ «զանազանել իրարից խաչագողն ու գործիչը, իսկականն ու կեղծը, բարին ու չարը, քննադատն ու չարախոսը» (6, 487): Բայց միաժամանակ վարանում էր և հրաժարվում որոշումից, որովհետև իբրև արդեն հանրաճանաչ ու սիրված բանաստեղծ «պաշտպանվելու» կարիք չէր զգում. «...Ես ձեզանից շատ ավելի լավ գիտեմ, որ բանաստեղծ եմ ես» (6, 437) և կամ՝ «Ճամփի փոշին ինչքան էլ վեր կենա, չի կարող սևացնի երկինքը» (6, 440): Գաղտնիք չէ, որ նախանձոտ մարդիկ իրենցից անհամեմատ ավելի արժանավորի հետ մրցակցության մեջ մտնելիս, առավել ևս, նրան դատելու դերն ստանձնելիս ստեղծում են արհամարհանքի առաջացման օբյեկտիվ պայմաններ: Թումանյանի արհամարհանքը հիմնավորված էր և արդարացված: Նույնիսկ հակառակորդներն իրենց հողվածների վերնագրերում նրան անվանում էին «մեծություն» և «չափազանց մեծ ժայռի են տալիս իրենց փոքրիկ ճակատները» (6, 438): Գրողը ցավով է նկատում, որ հայ իրականության մեջ «մեծությունների» վրա հարձակումները ավելի տգեղ ու անվայել բնույթ են կրում⁴⁷: «Չնչին մարդուկների» դեմ Թումանյանի արհամարհանքի զգացումը մերթ զուգահեռվում էր զայրույթին, սակայն ավելի հաճախ հաջորդում էր նրան: Թերևս անբնական կլիներ, որ տաղանդավոր անհատը չունենար սեփական անձի գերազանցության զգացում, ինչը թույլ է տալիս նրան միշտ ավելի ուժեղ զգալ հակառակորդի նկատմամբ: Զսպվածությունը ստիպում էր հրապարակայնորեն արհամարհել ընդդիմախոսներին և անպատասխան թողնել՝ հաշտվելով նրանց անխուսափելիության հետ. «Աստված մարդկանց զանազան տեսակի պատիժներ է տալիս: Ինձ էլ սրանով է պատժել, որ էս կրտիսկոսներից շարունակ անհեթեթություններ լսենք... Աստծու դրկած մեր պատիժը պետք է կրենք» (6, 494):

Թեև այդ հողվածները են տպագրվել, բայց դրանք կարևոր նշանակություն ունեն ոչ միայն բանաստեղծ-քննադատի հայացքների լուսաբանման տեսանկյունից, այլև նրա մարդկային բնավորության տարբեր շերտերն ընկալելու առումով: Վերնագրելով «Զայրույթի պատճառը»՝ բացատրում

⁴⁷ Նա համոզված էր, որ եթե որևէ ոռու Տոլստոյի մասին գրեր «գող», «շանտաժիստ» և «ավերիչ ժանտախտ», ապա նախ թերթերը չէին տպագրի, իսկ հետո ընթերցողը կարտահայտեր իր զայրույթը. «Եթե էդպես մի բան գրեր մի ոռու, կարող էր անցկացնել ոռուսաց մի հայտնի թերթի մեջ, և եթե անցկացնեք, ինչ կասեր ոչ թե էն տիտանը, այլ էն ընթերցող հասարակությունը, որ գիտի գրողի ու գրականության արժեքը» (6, 439):

է, թե իր հոգու փոթորիկները, գայրույթը ի՞նչ հիմքեր ու ինչ պատճառներ կարող էին ունենալ առհասարակ, թեև նրա պարզաբանումները ուղղված էին «ջենտլմենի ցիլինդրը գլխին», «քաղաքավարության դասեր տվող», «գրական բարձր-վսեմ էտիկա» (6, 428) քարոզող Մ. Բագրատունուն, թեև նրան էր ապացուցում, որ այդ «ջենտլմենությունը սուտ է, իսկ քաղաքավարությունը՝ կեղծավորություն» (6, 429):

Թումանյանը բազմիցս արծարծում է բարոյաբանական խնդիրներ, որովհետև նրա գայրույթի բուն պատճառը ոչ թե կոնկրետ անձի հոգու, այլ մարդկային հոգու չարությունն էր: «Երբեք ... փոքրությունն ու սոցիալությունը չի իմ գայրույթի պատճառը, – անվերջ կրկնում է բանաստեղծը: – ... Երբեք նրա կոպիտ բառերը չեն իմ գայրույթի պատճառը, այլ նրա հոգին, նրա հոգու թույնը, վատությունը, չարությունը» (6, 434) կամ՝ «Անպատկա՞ն է խոսել, դրա վրա էլ թափ կտայի ձեռքս և դարձյալ չէի գայրանալ: Մի խոսքով, ոչ թե նրա արածն է ինձ գայրացնում, այլ նրա հոգին, ոչ թե Դրամբյանը, այլ դրամբյանիզմը...» (6, 441): Բանաստեղծն ինքն էր բնութագրում իր բարկությունն իբրև «արդար ու ազնիվ գայրույթ՝ չարության ու կեղծավորության դեմ» (6, 437): Նա բանավիճում էր՝ խաղաղ ու անվրդով հոգով՝ բարկացած, բայց ոչ չարացած: «Աստված ինքը, որ բարություն է համակ ու բարության աղբյուրը, «անհնարին լի բարկությամբ ու սրտմտությամբ» է վեր կենում կեղծավորների ու չարերի դեմ...» (6, 438), – գրում է Թումանյանը՝ վկայակոչելով Աստծո և գրական մեծությունների գայրույթի համանման հիմքերը⁴⁸: Նրա գայրույթի պատճառը շատ ավելի լուրջ ու խորն էր, քան անձնական վիրավորանքը, թեև այդ էլ կար: Չէ՞ որ նրան մեղադրում էին ոչ միայն բանագողության, այլև ուրիշի հաշվին հարստություն դիզելու մեջ: Նրա գայրույթի բուն պատճառը սոցեղ երևույթի ընդհանրական ու տիպական, տարածված լինելն էր, այն, որ «էս մասնավոր դեպք չի բնավ» (6, 441): Զայրույթի բուն պատճառը ձևակերպված էր նաև հողվածի վերնագրում՝ «Չարության ու կեղծավորության դեմ», հեղինակը համոզված էր, որ ամենուր այդ երկուսը անբաժանելի են. «Չարը միշտ կեղծավոր է լինում» (6, 441): Դրամբյանն գրականության հանդեպ սիրո անունից էր գրողի երեսին շարտում. «Ես ձեր մեջ մարդ արարածը չեմ հարգում, օ՛, երբեք...»⁴⁹:

Ամենից մեծ ջանք ու եռանդ իլյեց Թումանյանից Դրամբյանի «Վերջին խոսքին» տրված պատասխանը: Նրա առաջին արձագանքից երկու օր անց՝ օգոստոսի 29-ի «Մշակի» շաբաթօրյա համարում տպագրված «Վերջին խոսքում» գրողի անարժան ընդդիմախոսը մեկ անգամ ևս ապացուցում է որևէ հիմնավոր փաստարկ ընկալելու իր անկարողությունը: Դրամբյանը, գայրացած բանաստեղծի ծաղրական ոճից, կրկին վերահաստատում է իր անհեթեթ մեղադրանքը. «Հո տեսնում եք, որ վերցված է բառ առ բառ,

⁴⁸ Պուշկինի «Критические заметки» հողվածից քաղվածաբար ներկայացնում է ռուս բանաստեղծի այն կարծիքը, թե «կրիտիկային կարելի է չպատասխանել, երբ գուտ գրական է հարձակումն և կարող է վնասել միայն գրքի վաճառումին: Բայց չի կարելի ծուլությունից կամ բարեսրտությունից անպատասխան թողնել անձնական վիրավորանքն ու ամբաստանությունը, որ այժմ դժբախտաբար սովորական է դարձած» (6, 440):

⁴⁹ «Մշակ», 27. VIII. 1909:

կետ առ կետ: Եթե կուգեք կետադրությունն էլ է վերցված, – ասում է Դրամբյանը և խոսքն ուղղում հեղինակին:

– Տեսեք, լավ տեսեք, այսքան փաստերի հանդեպ դուք ինչո՞ւ եք կամավոր կույր ձևանում... օրհասական ճիգ թափելով բանագողության տխուր փառքից ազատվելու, ընկնում եք մի այլ ծուղակի մեջ:

Դուք պարտավոր էիք նաև «Չարի վերջը», «Մուկիկի մահը», «Չախչախ թագավորը» հեքիաթների համար էլ հիշել, որ ժողովրդական են և այլն⁵⁰: Այս ելույթի պատասխանն ամենաձավալունն էր Դրամբյանի դեմ գրված հոդվածների շարքում և ուներ մի քանի տարբերակներ: Բանասիրական հարուստ նյութի, աղբյուրների հիշատակության և դրանց գիտական տեքստաբանական համեմատության վրա Թումանյանը դարձյալ վերարձարծում է գրականագիտության առանցքային խնդիրներից մեկը՝ ժողովրդական մտածողության և գեղարվեստական գրականության հարաբերության հիմնահարցը, ցույց տալիս ընդդիմախոսի հռչակած «աննշան, ոչ էական» տարբերությունների մեծ ու իրական լինելը⁵¹:

Մի քանի տարի անց՝ 1913 թ. ապրիլի 28-ին, «Հովիտ» ամսագրում Թումանյանի անձը և գործունեությունը վարկաբեկելու և «բանագողության» դրույթը վերահաստատելու, այն կրկին շրջանառության մեջ դնելու նպատակով սկսվում է «դրամբյանիզմի» մի նոր բիրտ արշավանք: Նոր բանավեճը սկսվում է Միմեռն Համայանի «Հովի. Թումանյանի «Գառնիկ ախպերը»», «Հայտնի բանաստեղծ կամ անհայտ բանագող» հոդվածներով և ավարտվում գրողի «Հայոց դրամբյանիզմն ու ես» ծրագրային հոդվածի հրապարակումով⁵²: Քննադատը հավաստիացնում է, որ Թումանյանի բնավորությանը բնորոշ է մի «շատ տզեղ և անհամակրելի գիծ», որն էր՝ չնչին փոփոխություններով անհայտ հեղինակների երկերը որպես «սեփական ստեղծագործության արգասիք» ներկայացնելը: Բերելով, իբր, «հիմնավոր ապացույցներ»՝ հոդվածն եզրափակում է այսպես. «Հով. Թումանյանը՝ ... տեղ-տեղ ազատ կերպով փոխադրել է և տեղ-տեղ էլ ստրկորեն թարգմանել ուերենից... ի՞նչ իրավունքով հրատարակել է այն որպես ինքնուրույն գրվածք: Մի թե Հով. Թումանյանի համար այնքան գրավիչ է եղել գրական թալանի զգվելի՞ ... ու կեղտոտ ուղին»⁵³: Գրողն իր պատասխանում դիմում է գրախոսին. «Ես ռուսականը չեմ թարգմանել, տիրացու Ս. Հ.

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Թումանյանը հիշատակում է Գևորգ Տեր-Ալեքսանդրյանի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» (Թիֆլիս, 1885), Ս. Հայկունու «Ժողովրդական առակները» (Վաղարշապատ, 1907), «Բնգիլոյական հեքիաթները» («Воробей», 1903), «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (выпуск 32), Գևորգ Գ. Շերենցի «Վանա սագ (Հավաքածոյք Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առակների և հանելուկների)», (Թիֆլիս, 1885), Գարեգին Սրվանձտյանի «Համով հոտո» (Կ. Պոլիս, 1884) ժողովածուները: Մի հոդվածի սահմաններում այդքան տարբերակների վերլուծությունը վկայում է, թե գրողն որքան մանրակրկիտ, մեծաձավալ, «ոսկերչական» աշխատանք է կատարել «Լուսաբերի» համար և առհասարակ հեքիաթները մշակելիս:

⁵² Ս. Համայանի հոդվածը տպագրվում է «Հովիտ» շաբաթերթի (Թիֆլիս) 1913 թ. թիվ 16-ում, Թումանյանի պատասխանը՝ «Հովիտի» Ս. Հ.-ի քննադատականի առիթով», տպագրվում է մայիսի 3-ին «Հորիզոն» թերթում: «Հովիտի» էջերում (թիվ 22) հրապարակվում է Ս. Համայանի «Հայտնի բանաստեղծ կամ անհայտ բանագող» հոդվածը՝ Թումանյանի դեմ, իսկ վերջինիս պատասխանը՝ «Հայոց դրամբյանիզմն ու ես», լույս է տեսնում «Հորիզոնի» հունիսի 12-ի, 13-ի և 21-ի համարներում:

⁵³ «Հովիտ», 1913, թիվ 16, էջ 252–253:

կամ պարոն Ս. Հ., այլ հայկականն եմ առել ու մշակել: Եվ հայկականն էլ մի հաստ չի, տիրացու Ս. Հ. կամ պարոն Ս. Հ., Արարատյան տարբերակը կա, Վասպուրականիներ կա, Տարոնիներ կա, Շահրիարիներ կա, Թիֆլիսիներ կա-տպված ... Էդ ամենը զուտ հայկական են – էսպես կիտսեի ու կպատասխանեի: Բայց որովհետև նրա ուճից ու շնչից տգիտության հետ կաթում է հոգու վատությունը, չարությունը, ստիպված եմ պատասխանելու.

– Տիրացու Ս. Հ. կամ պարոն Ս. Հ., ... իմացած եղեք ու միշտ միտներդ պահեցեք,, որ եթե աստված ձեզ բերան է տվել՝ նրա համար հո չի տվել որ Էդպես անմիտ ու անքաղաքավարի կերպով լեն-լեն բաց անեք, ձեր խելքիցը դուրս բաներից խոսեք ու գրողներին քննադատեք, այլ նրա համար, որ հաց ուտեք» (7, 54): Գրողի՝ հիմնավորումները Ս. Համայանն անվանում է «մասխարություններ», իսկ նրան՝ «անհայտ բանագող»⁵⁴: Նա բանաստեղծին «հայ գրագողերի տիրահամբավ շարքերում» բնորոշում է «եզակի ու աննման բացառություն», քանի որ նրա բանագող լինելուն «ոչ ոք չի հավատում», որովհետև նա «իբրև գրագող շատ է ճարպիկ ու շատ է հմուտ. ոչ մի գրագող չէ կարող ուրիշի մտավոր սեփականությունը այնպես հմտորեն յուրացնել, և այնպես ճարպկորեն չքմեղ ձևացնել իրեն այդ բանում, ինչպես Հովհ. Թումանյանը»:

Ս. Համայանը «մասխարչի» գրողի հասցեին անձնական վիրավորանքներով է ավարտում խոսքը՝ նրան վերագրելով «Չարություն, վատություն, մեծամտություն, տհասություն, տգիտություն, տիրացուություն: Հավատացնում եմ ձեզ,– գրում է Համայանը,– որ այս բոլոր «ությունները» ձեր բախտավոր թե դժբախտ հոգու անկողնուպսելի ու անձեռնմխելի սեփականություններն են»⁵⁵:

Պատասխան հողվածում Թումանյանն ամփոփում է նույն թեմայով տպագրության չհանձնած նախորդ երեք հողվածների նյութը և արդեն ասվածը ներկայացնում ջախջախիչ նոր ուժով: Մրտի ցավով է անդրադառնում տխուր երևույթին, որի անունն ինքը կնքել էր «դրամբյանիզմ», որի էությունը բնորոշում է մարտնչող, հարձակվող, հավակնոտ տգիտությանը, գրական անձաշակությանը միացած վատ հոգին և փոքրիկ հոգու չարությունը: Նոր դրամբյանները նոր անուններ ունենին՝ Միմեոն Համայան, Տեր Եզնիկ, Ա. Քալանթար, Համբարձում Առաքելյան, սակայն դրանից նրանց հավաքական էությունը չէր փոխվում. նրանք շարունակում էին «անվանարկել, թունավորել՝ միշտ նոր ու նոր տխմարություններ ու հայիոյանքներ կուտակելով մեջտեղը...

Իհարկե, էդ բոլորն ինձ ի՛նչ պետք է անեն, ոչինչ... բայց երևույթը, երևույթը շատ է զարշելի, հոգին շատ է ցած ու վատ» (7, 66):

Գրողի բանավիճային հողվածները վկայում են, որ Թումանյան մարդը և գրողը, քննադատն ու հրապարակախոսը միաձույլ ամբողջություն են: Նա ինչպես կյանքում, այնպես էլ հրապարակախոսության մեջ օգտագործում էր պատկերավոր խոսքը, առակներ, ասացվածքներ, երգիծանք: Գրողի վերոհիշյալ հողվածները բնորոշվում են երգիծանքի ցայտուն դրսևորումներով: Նա գեղագիտական-տեսական լրջագույն հարցադրումները

⁵⁴ «Հովիտ», 1913, թիվ 22, էջ 345:

⁵⁵ Նույն տեղում:

զուգորդվում են երգիծական ոճի առանձնահատկությունների հետ: Պամֆլետային տարրերը ներկայանում են հակադիր իմաստների զուգադրմամբ: Կիրառում է երգիծանքով հակառակորդին պսակազերծելու, երբեմն էլ՝ ոչնչացնելու պարսավազրական եղանակը: Այսպես. «Գալիս է մի ոմն Դրամբյան՝ ... Բայց, ինչպես կասեն՝

Դեռ չմտած ավագան,

Ձեռքն առնում է գավագան» (6, 487):

Կամ. «... մարդիկ կան, որոնց եթե աստված բերան է տվել, նրա համար է տվել, որ հաց ուտեն, ոչ թե գաղափարների քարոզիչ ձևանան» (6, 440): «Ասում է՝ մի մարդու հարցնում են բաղնիք տեսե՞լ ես, թե՞ չէ: Ասում է, տեսել եմ, խոզի նման պոզեր ունի... Հիմի սրանն է» (6, 451): «Մարդիկ կան, որոնց քիչ են ասում, շատ են հասկանում, մարդիկ էլ կան, որոնց շատ պետք է ասել, որ քիչ հասկանան» (6, 433):

Թումանյանի քննադատական ժառանգության վիճաբանական ելույթները հայ հրապարակախոսական մտքի բազմադարյան պատմության նվաճումներից են և գրական բանավեճի ասպարեզում մնայուն արժեքներ: Ինչ խոսք, Թումանյանը նախ և առաջ բանաստեղծ էր, գեղագետ, բայց կասկածից վեր է գրաքննադատի, գրականության պատմաբանի և հրապարակագրի նրա հզոր տաղանդը, գրականության պատմության և ընթացիկ գրական կյանքի բոլոր խնդիրները գիտական զարմանալի ճշգրտությամբ ու խորությամբ գնահատելու, իր ժամանակի ամենատուր ու բախտորոշ հարցերն ազգային շահի տեսանկյունից մեկնելու հազվագյուտ, փայլուն ունակությունները: Անշուշտ, հայ գրականությունը կշահեր, եթե բանաստեղծը, որ միայն «հիվանդ» ժամանակ է հնարավորություն ունեցել ստեղծագործելու, գեղարվեստական իր բազում մտահղացումները իրականացնելու համար այդ ուժն ու եռանդը ծախսեր արվեստում, բայց շատ բան կկորցներ հայ հասարակական-քաղաքական, գրաքննադատական մտքի բնագավառը, որտեղ նրա տաղանդն ու գրիչը նույնքան անմրցելի են, որքան հայ հոգևոր կյանքի ցանկացած ոլորտում: Բանաստեղծ լինելու հանգամանքը ոչ թե խանգարել, այլ օգնել է Թումանյան-հրապարակախոսին՝ դառնալով նրա ոչ թե թուլությունը, այլ ուժը: Լայնորեն օգտվելով պատրաստի, թնավոր խոսքերից, պատկերավոր ու գեղարվեստական ոճի գեղագիտական հնարանքներից՝ Թումանյանն էլ ավելի համոզիչ, մատչելի ու պարզ էր դարձնում ասելիքը և երբեք փաստերը չէր հարմարեցնում իր ցանկություններին: Ընդհակառակը, միշտ գնում էր կենսական փաստերի հետքերով, հսկայական ժամանակ հատկացնում դրանց ձեռքբերմանը, որպեսզի մշտապես հեռու լիներ վերացականությունից, ինչը նա միշտ մերժում էր բոլոր ասպարեզներում: Թումանյանի հրապարակախոսական ելույթների բովանդակությունը թեմատիկ բոլոր ընդգրկումներով վկայում են Թումանյան-մարդու, բանաստեղծի և հրապարակագրի, գրաքննադատի ներդաշնակ, միաձույլ ամբողջությունն ու միասնությունը:

ИЗ ИСТОРИИ ЛИТЕРАТУРНЫХ ДИСКУССИЙ
ТУМАНЯНА*СУСАННА ОВАНЕСЯН*

Резюме

В истории армянской риторической мысли отсутствие исследований, посвященных речевой культуре Ов.Туманяна, является одной из «белых страниц» туманяноведения. Особенности речи писателя нашли выражение как в художественном, так и в публицистическом наследии писателя, в частности, в полемических статьях. Туманян часто вовлекался в острые диспуты во имя авторских прав писателей, которые он отстаивал в борьбе с издательскими обществами, с произволом составителей учебников. Он выступал с дискуссионными статьями по вопросам развития армянского литературного языка, задавая вопросом, как и в какой степени можно использовать словарные заимствования. На страницах редактируемой им газеты Туманян «Оризон» мог публиковать обвинения в свой адрес и даже не отвечать на них. По горячим следам полемики он передавал свои мысли и чувства бумаге, а впоследствии не сдавал в печать. За потоком чувств всегда следовал взвешенный подход: доказав публично и с привлечением убедительных аргументов и разъяснений свою правоту, он не считал нужным вновь возвращаться к затронутой проблеме. Серьезнейшие теоретико-дискуссионные вопросы, поднимаемые поэтом, сочетались с особенностями сатирической стилистики. Образная речь и сила аргументации Туманяна оставались неуязвимыми для оппонентов. В 1909–1913 гг. острые полемические статьи Туманяна стоили автору большого душевного напряжения, принесли ему боль и переживания, бессонные ночи и страдания. Но они при этом стали лучшими страницами в истории армянской литературы и критической, публицистической мысли.

FROM THE HISTORY OF TOUMANYAN'S LITERARY DEBATES

SUSANNA HOVHANNISSYAN

Summary

The absence of the research of the culture of Toumanyan's speech is still considered to be one of the "open pages" in the history of the Armenian rhetorical thought. The writer's peculiarities of speech are expressed both in his fiction and in his journalistic heritage, particularly in the disputable articles. Toumanyan often got involved in sharp debates with Publishing houses and editors of textbooks for the sake of writers' copyright for many times. He wrote a number of controversial articles on language development issues and on how to use borrowings. Toumanyan could publish accusations against himself in the newspaper "Horizon" edited by him, and even

not to respond. After usual hot debates he used to express his thoughts and feelings in the papers but very often he did not provide them for printing. The feelings' eddy was always followed by a balanced approach: publicly proving his accuracy with extensive arguments and explanations he did not want to address to that question once again. The writer's serious theoretical-debatable inquiries went in parallel with satirical style peculiarities. Due to his descriptive speech and power of logic Toumanyán was invulnerable for his opponents. In 1909–1913 Toumanyán's sharp disputable articles caused him much tension, pain, anger, sufferings and sleepless nights, but as a result they became the best pages of the Armenian literature and history of critical thought.